# «Այգ-1» արևային էլեկտրակայան

**ՎԱՅՐ**
Հայաստան

**ԾՐԱԳՐԻ No.**
53283

**ԲԻԶՆԵՍ ՈԼՈՐՏ**
Էներգետիկա

**ԾԱՆՈՒՑՄԱՆ ՏԵՍԱԿ**
Մասնավոր

**ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՏԵԳՈՐԻԱ**
Բ

**ՀԱՍՏԱՏՄԱՆ ԱՄՍԱԹԻՎ**
Հունվարի 24, 2024թ.

**ԿԱՐԳԱՎԻՃԱԿ**
Հայեցակարգն ուսումնասիրվել է:

***Անգլերեն լեզվով* ԾԱՓ-ն հրապարակվել է**
Հոկտեմբերի 17, 2023թ.

## Ծրագրի նկարագրություն

Հաճախորդի համար («Վարկառու») մինչև 41 միլիոն ԱՄՆ դոլարի չափով, ռեգրեսի սահմանափակ իրավունքով ապահովված Ծրագրի ֆինանսավորման գործիք («Մայր վարկ»), որը զուգորդվում է Մաքուր տեխնոլոգիաների հիմնադրամից արտոնյալ պայմաններով Հաճախորդին տրամադրվող մինչև 6 միլիոն ԱՄՆ դոլարի վարկի հետ («ՄՏՀ վարկ»)՝ Հայաստանի արևմտյան հատվածում՝ Արագածոտնի մարզի Թալին և Դաշտադեմ քաղաքներում, 200 ՄՎտ հզորությամբ արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի («Ծրագիր») մշակումը, նախագծումը, կառուցումը և շահագործումը (միասին՝ «Վարկեր») ֆինանսավորելու նպատակով: Վարկառուն Հայաստանում գրանցված սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն է, որի բաժնետոմսերի 85%-ը պատկանում է «Abu Dhabi Future Energy Company - Մասդար» ՀԲԸ-ին («Ֆինանսավորող»):

## Ծրագրի նպատակներ

Ծրագիրը կնպաստի ազգային էներգետիկ հաշվեկշռում վերականգնվող էներգիայի նախագծերի մասնաբաժնի ավելացման և հանածո վառելիքով արտադրությունից կախվածությունը նվազեցնելու Հայաստանի կառավարության ռազմավարական առաջնահերթությանը: Սա կնպաստի կլիմայի փոփոխության մեղմացմանը՝ ազգային

էներգետիկ համակարգին ավելացնելով 200 ՄՎտ արևային արտադրության կարողություն, ինչը համապատասխանում է տարեկան մինչև 169,000 տոննայի $CO_2$ արտանետումների ակնկալվող կրճատմանը:

## Անցումային շրջանի վրա ազդեցություն

Էներգետիկ անցման ցուցանիշի (ETI) միավոր՝ 69

Անցումային շրջանի ազդեցությունը պայմանավորված է. (i) կանաչ տնտեսության անցնելու (GET) իմաստով ՎԶԵԲ-ի մոտեցմանը Ծրագրի պոտենցիալ աջակցությամբ, քանի որ այն հնարավորություն կընձեռի արևային էներգիայի միջոցով էլեկտրաէնեգիա արտադրել, որն էլ կնվազեցնի ջերմային էներգիայի արտադրությունից երկրի բարձր կախվածությունը և (ii) այն հանգամանքով, որ Ծրագիրը կդառնա արդյունաբերական մասշտաբի երկրորդ, մասնավոր էներգաարտադրողը Հայաստանում, որտեղ գործում են միայն փոքր մասշտաբի, մասնավոր, պարբերական արտադրական հզորությունները:

## Հաճախորդի մասին տեղեկատվություն

ՊԵՏՔ Է ՍԱՀՄԱՆՎԻ

## ՎԶԵԲ-ի ֆինանսավորման ամփոփագիր

47,000,000.00 ԱՄՆ դոլար

## Ծրագրի ընդհանուր արժեք

186,600,000.00 ԱՄՆ դոլար

## Լրացուցիչ

*Ֆինանսավորման կառուցվածք* - Բանկն ակտիվորեն տրամադրում է երկարաժամկետ ֆինանսավորում այնպիսի պայմաններով, որոնք հասանելի չեն տեղական շուկայում: *Ֆինանսավորման նորարարական կառուցվածքներ և/կամ գործիքներ* - Բանկը մի շարք մասնագիտացված ֆինանսական գործիքներ կտրամադրի ծրագրի ֆինանսավորման կառուցվածքի համատեքստում, որոնք նորարարական են Հայաստանի էներգետիկ ոլորտի համար: *Ռիսկի մեղմացում* - Ֆինանսավորողը հանդիսանում է Բանկի վաղեմի հաճախորդը և ձգտում է, որպեսզի ՎԶԵԲ-ը ներգրավվի Ծրագրի շրջանակներում՝ հաշվի առնելով ՎԶԵԲ-ի փորձը և գործունեության այլ երկրներում համանման ծրագրերում ներգրավվածության իմաստով փորձը և Բանկի ներգրավվածությունը Հայաստանում:

## Բնապահպանական և սոցիալական ամփոփագիր

ՎԶԵԲ-ի 2019թ-ի բնապահպանական և սոցիալական քաղաքականության (ԲՍՔ) համաձայն Ծրագիրը դասակարգվել է որպես Բ կատեգորիայի Ծրագիր: Վարկատուի անկախ Բ և Ս խորհրդատուի (ՎԱԲՍԽ) կողմից բնապահպանական և սոցիալական

պահանջներին համապատասխանության գնահատումը (ԲՍՊՅՈՒ) շարունակվում է, ներառում է այցելությունը տեղամաս և «Մասդար» ընկերության բնապահապանական և սոցիալական փաստաթղթերի ուսումնասիրությունը, այդ թվում նաև ԲՍԱԳ նախագծային տարբերակի և ոչ տեխնիկական ամփոփագրի (NTS), Շահագրգիռ կողմերի ներգրավման պլանը (ՇՆԿՊ), Կենսապահովման վերականգնման պլանը (LRP) և Մշակութային ժառանգության կառավարման պլանը (ՄԺԿՊ) ընթացքում է:

ԲՍՊՅԳ նախնական արդյունքներն ամփոփ ներկայացվում են ստորև, իսկ ԾԱՓ-ն կթարմացվի պահանջներին համապատասխանության ուսումնասիրությունն ավարտելուց հետո:

Բնապահպանական և սոցիալական պահանջներին համապատասխանության գնահատումը (ESDD) ցույց տվեց, որ ռիսկերը և ազդեցությունները կարելի է մեղմել Բ և Ս փաստաթղթերում ներկայացվող միջոցառումների միջոցով և Ծրագրի իմաստով սպեցիֆիկ Բնապահպանական և սոցիալական գործողությունների ծրագրերի (ESAP) միջոցով, որոնք համաձայնեցվել են Ֆինանսավորողի հետ: Վարկառուն 85%-ով պատկանում է Ֆինանսավորողին, որն ունի կարողություններ՝ Կատարողականի պահանջների (PRs) համաձայն Ծրագիրն իրականացնելու համար: Ինչպես պահանջվում է Բնապահպանական և սոցիալական գործողությունների ծրագրով (ESAP), Ծրագրային ընկերությունը համապատասխան Բ և Ս ռեսուրսներ կներգրավի և կամփոփի ու կիրականացնի Բնապահպանական և սոցիալական կառավարման համակարգը շինարարության և շահագործման ընթացքում:

Արևային ֆոտովոլտային (ՖՎ) կայանի տեղադրման համար պահանջվող հողատարածքը կազմում է 525հա, որը գտնվում է Թալինի տարածաշրջանում՝ գյուղատնտեսական ցածրորակ հողատարածքի փոփոխված միջավայրում: Կարճ (մոտ 300 մ) նոր օդային գիծը կմիանա տեղամասի հարևանությամբ անցնող ենթակայանի գծին: Ծրագիրը չի գտնվում կարևոր նեղ հատվածում կամ աշխարհագրական օբյեկտում, որտեղ կենտրոնանում են չվող թռչունների տեսակները, և չի պարունակում այնպիսի օբյեկտներ, որոնք կարող են գրավել չվող կամ ձմեռող թռչուններին: Մինչ օրս չի հայտնաբերվել մի որևէ տեսակ, որը կարող է ապահովել հույժ կարևոր կենսամիջավայր, և փոքրաթիվ տեսակներ ճանաչվել են որպես առաջնահերթ կենսաբազմազանության օբյեկտներ (ԱԿՕ-ներ):

Ծրագրի տեղամասը տեղակայված է Դաշտադեմ, Թալին, Աշնակ և Կաթնաղբյուր բնակավայրերի միջև և հողի փոխանցման գործընթացից առաջ տեղամասը պաշտոնապես հանդիսանում էր Դաշտադեմի և Թալինի համայնքային հողը: Համայնքների կողմից տեղամասի օգտագործումը գյուղատնտեսական նպատակներով սահմանափակվում է սեզոնային արածեցմամբ:

Ծրագրի շրջանակներում հայտնաբերվել են մշակութային ժառանգության մեծ թվով օբյեկտներ, որոնցից ոչ մեկը ազգային նշանակության կամ իրավական իմաստով պահպանվող հուշարձան չեն հանդիսանում: Որպես ազդեցության գնահատման գործընթացի մաս՝ Ֆինանսավորողը ձեռնարկել է Ծրագրի կառուցվածքի և նախագծման վերանայում՝ խուսափելու համար առավել զգայուն օբյեկտներից, և լրացուցիչ մեղմացման միջոցառումները ներառվել են ՄԺԿՊ-ում:

Արևային բաղադրամասերի համար շարունակվում է մատակարարման շղթայի՝ պահանջներին համապատասխանության ընդլայնված ուսումնասիրությունը՝ արևային

մատակարարման շղթայի ռիսկերի կառավարման Բանկի ղեկավարության մոտեցման համաձայն:

## Ընկերության կոնտակտային տեղեկատվություն

Vipul Goyal
vgoyal@masdar.ae
https://masdar.ae/
PO Box 54115, Abu Dhabi, UAE

## ԾԱՓ վերջին թարմացում

Հոկտեմբերի 17, 2023թ.

## Անցումը հասկանալը

Անցման ազդեցությունը չափելու համար ՎԶԵԲ-ի մոտեցման վերաբերյալ հետագա տեղեկատվությունը հասանելի է այստեղ:

## Բիզնես հնարավորություններ

Բիզնես հնարավորություններ կամ գնումների համար կապ հաստատեք կորպորատիվ հաճախորդի հետ:

ՎԶԵԲ-ի հետ գործնական հնարավորությունների քննարկման համար (որոնք կապված չեն գնումների հետ) կապ հաստատեք՝

Հեռ.՝ +44 20 7338 7168
Էլ. փոստ՝ projectenquiries@ebrd.com

Պետական հատվածի ծրագրերի համար այցելեք EBRD Procurement:

Հեռ.՝ +44 20 7338 6794
Էլ. փոստ՝ procurement@ebrd.com

## Ընդհանուր հարցեր

Սպեցիֆիկ հարցերը կարող են ներկայացվել ՎԶԵԲ-ի հարցումների ձևանմուշի միջոցով:

## Բնապահպանական և սոցիալական քաղաքականություն (ԲՍՔ)

ԲՍՔ-ն և դրա հետ կապված Կատարողականի պահանջները (ԿՊ-ներ) սահմանում են այն, թե ինչպես է ՎԶԵԲ-ն իրականացնում «բնապահպանական իմաստով ապահով և կայուն զարգացման» խթանման իր հանձնառությունը: ԲՍՔ-ն և ԿՊ-ները սպեցիֆիկ դրույթներ են ներառում հաճախորդների համար՝ հանրային տեղեկատվության և

խորհրդակցությունների մասին ազգային օրենքների կիրառվող պահանջներին համապատասխանության ապահովման համար, ինչպես նաև բողոքարկման մեխանիզմներ է ներդրում՝ շահագրգիռ կողմերի մտահոգությունների և բողոքների լուծում ստանալու և դյուրացնելու համար, մասնավորապես հաճախորդի և ծրագրի բնապահպանական և սոցիալական կատարողականի վերաբերյալ: Ծրագրի բնապահպանական և սոցիալական ռիսկերի և ազդեցությունների բնույթին և մասշտաբին համաչափ, ՎԶԵԲ-ը լրացուցիչ կերպով նաև իր հաճախորդներից պահանջում է, անհրաժեշտության դեպքում, տեղեկատվություն հրապարակել նախագծերից բխող ռիսկերի և ազդեցությունների մասին կամ բովանդակալից խորհրդակցություններ ձեռնարկել շահագրգիռ կողմերի հետ և քննարկել և արձագանքել նրանց հետադարձ կապին:

Այս առնչությամբ ՎԶԵԲ-ի գործելակերպի մասին լրացուցիչ տեղեկություններ ներկայացված են ԲՍՔ-ում:

## Ամբողջականություն և համապատասխանություն

ՎԶԵԲ-ի ներքին վերահսկողության տեսուչի գրասենյակը (ՆՎՏԳ) խթանում է լավ կառավարումը և ապահովում, որպեսզի համապատասխանության բարձրագույն ստանդարտները կիրառվեն Բանկի բոլոր գործողությունների նկատմամբ՝ միջազգային լավագույն պրակտիկայի համաձայն: Բանկի բոլոր հաճախորդների նկատմամբ իրականացվում է պահանջներին համապատասխանության ուսումնասիրություն, որպեսզի ծրագրերն ամբողջականության կամ հեղինակության տեսակետից անընդունելի վտանգ չներկայացնեն Բանկի համար: Բանկը կարծում է, որ ծրագրի գնահատման հաստատման փուլում խնդիրների բացահայտումն ու լուծումը Բանկի գործունեության ամբողջականությունն ապահովելու ամենաարդյունավետ միջոցն է: ՆՎՏԳ-ն հիմնական դերակատարություն ունի այս պաշտպանիչ ջանքերի իմաստով և օգնում է ծրագրերի ներդրումներին հաջորդող շրջաններում ամբողջականության ռիսկերը մոնիթորինգի ենթարկելու հարցում:

ՆՎՏԳ-ն նաև պատասխանատու է ՎԶԵԲ-ի կողմից ֆինանսավորվող ծրագրերում խարդախության, կոռուպցիայի և ոչ իրավաչափ գործողությունների վերաբերյալ մեղադրանքների հետաքննության համար: Թե՛ Բանկի ներսում և թե՛ դրսում յուրաքանչյուր ոք, ով ունի խարդախության կամ կոռուպցիայի կասկածներ, պետք է գրավոր դիմի Ներքին վերահսկողության տեսուչին՝ compliance@ebrd.com էլ. փոստի հասցեով: Բոլոր հաղորդված խնդիրները կուսումնասիրվեն ՆՎՏԳ-ի կողմից՝ հետագա գործողություններ նախաձեռնելու նպատակով: Բոլոր հաղորդումները, այդ թվում նաև անանուն հաղորդումները, կդիտարկվեն: Հաշվետվությունները կարող են պատրաստվել Բանկի կամ նրա գործունեության երկրի ցանկացած լեզվով: Տրամադրված տեղեկատվությունը պետք է տրամադրվի ուղղամիտ կերպով:

## Տեղեկատվության հասանելիության քաղաքականություն (ՏՀՔ)

ՏՀՔ-ն սահմանում է, թե ինչպես է ՎԶԵԲ-ը հրապարակում տեղեկատվությունը և խորհրդակցում է շահագրգիռ կողմերի հետ՝ 2020թ-ի հունվարի 1-ին ուժի մեջ մտնելուց հետո վերջինիս ռազմավարությունների, քաղաքականությունների և գործառնությունների մասին ավելի լավ իրազեկումը և ընկալումն ավելի լավ խթանելու

նպատակով: Այցելեք խնդրեմ Տեղեկատվության հասանելիության քաղաքականության էջ՝ պարզելու համար, թե ՎԶԵԲ-ի կայք-էջից ինչ տեղեկատվություն է հասանելի: Տեղեկատվության համար համար հատուկ հայտ կարելի է ներկայացնել՝ կիրառելով ՎԶԵԲ-ի հարցման ձևանմուշը:

## Ծրագրի հաշվետվողականության անկախ մեխանիզմ (ԾՀԱՄ)

Եթե բնապահպանական, սոցիալական կամ հանրային բացահայտման մտահոգությունները լուծելու Հաճախորդի կամ Բանկի ջանքերն անհաջող են (օրինակ՝ Հաճախորդի Ծրագրի մակարդակի բողոքարկման մեխանիզմի կամ Բանկի ղեկավարության հետ անմիջական մասնակցության միջոցով), անհատները և կազմակերպությունները կարող են փորձել լուծել իրենց մտահոգությունները ՎԶԵԲ-ի՝ Ծրագրի հաշվետվողականության անկախ մեխանիզմի (ԾՀԱՄ) միջոցով:

ԾՀԱՄ-ն անկախ ուսումնասիրում է Ծրագրի հետ կապված հարցերը, որոնք վնաս են հասցրել (կամ հավանաբար կարող են վնաս հասցնել): Մեխանիզմի նպատակն է աջակցել Ծրագրի գործընկերների միջև երկխոսությանը՝ բնապահպանական, սոցիալական և հրապարակման հարցերը, որոշել, թե արդյոք Բանկը ապահովել է համապատասխանությունը Բնապահպանական և սոցիալական քաղաքականությանը կամ Տեղեկատվության հասանելիության քաղաքականության՝ Ծրագրի իմաստով սպեցիֆիկ դրույթներին և որտեղ կիրառելի է, լուծելու այս քաղաքականություններին անհամապատասխանությունները՝ Բանկի կողմից հետագա անհամապատասխանությունը կանխարգելելու համար:

ԾՀԱՄ-ի և վերջինիս մանդատի մասին լրացուցիչ տեղեկանալու կամ Հայտ ներկայացնելու մասին ավելին իմանալու համար այցելեք խնդրեմ Ծրագրի հաշվետվողականության անկախ մեխանիզմի կայք-էջ կամ կապ հաստատեք ԾՀԱՄ-ի հետ՝ ipam@ebrd.com էլ. փոստի միջոցով՝ ԾՀԱՄ-ի և հայտ ներկայացնելու ձևի մասին ուղղորդում և ավելի շատ տեղեկատվություն ստանալու համար:

## Անցումային շրջանի ընկալումը

Այստեղ կարող եք լրացուցիչ տեղեկություններ գտնել առ այն, թե ինչ մոտեցումներ է կիրառում ՎԶԵԲ-ը անցումային շրջանում առաջընթացի վրա ազդեցությունը չափելու համար:

## Բիզնես հնարավորություններ

Բիզնես հնարավորությունների կամ գնումների համար դիմե՛ք հաճախորդի ընկերությանը:

ՎԶԵԲ-ի հետ կապված (գնումներին չառնչվող) բիզնես հնարավորությունների համար դիմե՛ք.

Հեռ.՝ +44 20 7338 7168
Էլ-փոստ՝ projectenquiries@ebrd.com

Պետական ոլորտում ծրագրերի համար այցելե՛ք ՎԶԵԲ-ի գնումներ:

Հեռ.՝ +44 20 7338 6794
Էլ-փոստ՝ procurement@ebrd.com

## Ընդհանուր հարցումներ

Կարող եք անել կոնկրետ հարցումներ՝ օգտագործելով ՎԶԵԲ-ի հարցումների ձևաթուղթը:

## Բնապահպանական և սոցիալական քաղաքականություն (ԲՍՔ)

ԲՍՔ-ն և դրա հետ կապված՝ Գործունեության նկատմամբ պահանջները (ԳՊ-ներ) սահմանում է այն ուղիները, որոնց միջոցով ՎԶԵԲ-ն իրականացնում է իր հանձնառությունը՝ խթանել «էկոլոգիապես առողջ և կայուն զարգացումը»: ԲՍՔ-ն և ԳՊ-ները պարունակում են հատուկ դրույթներ, ըստ որոնց հաճախորդները պետք է համապատասխանեն տեղեկությունների հրապարակայնացման և խորհրդատվության մասին ազգային օրենքների կիրառվող պահանջներին, ինչպես նաև ստեղծեն բողոքարկման մեխանիզմ՝ շահագրգիռ կողմերի մտահոգությունները և բողոքները ստանալու և լուծումները դյուրացնելու նպատակով, մասնավորապես, հաճախորդի և ծրագրի կողմից բնապահպանական և սոցիալական ասպեկտների կատարողականի վերաբերյալ: Կախված ծրագրի բնապահպանական և սոցիալական ռիսկերի և ազդեցությունների բնույթից և մասշտաբից, ՎԶԵԲ-ը լրացուցիչ պահանջում է, որ իր հաճախորդները, անհրաժեշտության դեպքում, տեղեկություն հրապարակեն ծրագրից բխող ռիսկերի և ազդեցությունների մասին կամ բովանդակալից խորհրդակցություններ անցկացնեն շահագրգիռ կողմերի հետ, դիտարկեն նրանց կարծիքներն ու արձագանքեն դրանց:

Այս կապակցությամբ ՎԶԵԲ-ի գործելակերպի վերաբերյալ ավելի մանրամասն տեղեկությունները ներկայացված են ԲՍՔ-ում:

## Բարեվարքություն և համապատասխանություն

ՎԶԵԲ-ի՝ Համապատասխանության վերահսկման գլխավոր տնօրենի գրասենյակը (ՀՎԳՏԳ) խթանում է լավ կառավարումը և ապահովում բարեվարքության բարձրագույն չափանիշների կիրառումը Բանկի գործունեության բոլոր ասպեկտներում՝ միջազգային լավագույն փորձի համաձայն: Բանկի բոլոր հաճախորդների վերաբերյալ իրականացվում է բարեվարքության պահանջներին համապատասխանության ստուգում-ուսումնասիրություն՝ համոզվելու, որ ծրագրերը չեն պարունակում Բանկի համար անընդունելի ռիսկեր բարեվարքության կամ հեղինակության առումով: Բանկի համոզմամբ, ծրագրի գնահատման և հաստատման փուլերում խնդիրների հայտնաբերումն ու լուծումը Բանկի գործարքների բարեվարքության ապահովման ամենաարդյունավետ միջոցներն են: ՀՎԳՏԳ-ն առանցքային դեր է կատարում պաշտպանիչ այս գործողություններում, ինչպես նաև օգնում է վերահսկել բարեվարքությանն առնչվող ռիսկերը ծրագրերի հետներդրումային փուլերում:

ՀՎԳՏԳ-ն նաև պատասխանատու է ՎԶԵԲ-ի կողմից ֆինանսավորվող ծրագրերում կեղծիքի, կոռուպցիայի և չարաշահման կապակցությամբ մեղադրանքների հետաքննության համար: Ցանկացած անձ, ինչպես Բանկի ներսում, այնպես էլ նրանից դուրս, ով կասկածներ ունի, որ առկա են կեղծիքի կամ կոռուպցիայի դեպքեր, պետք է գրավոր զեկույց ներկայացնի Համապատասխանության վերահսկման գլխավոր տնօրենին էլ-փոստով՝ compliance@ebrd.com: Խնդիրների մասին բոլոր զեկույցները կքննվեն ՀՎԳՏԳ-ի կողմից՝ հետագա քայլերը որոշելու նպատակով: Քննվելու են բոլոր զեկույցները, այդ թվում՝ անանուն զեկույցները: Զեկույցները կարող եք ներկայացնել Բանկի կամ Բանկի գործունեության ցանկացած երկրի լեզվով: Տեղեկությունը տրամադրելիս անհրաժեշտ է դրսևորել բարեխիղճ մոտեցում:

## Տեղեկությունների հասանելիության քաղաքականություն (ՏՀՔ)

ՏՀՔ-ն սահմանում է, թե ինչպես է ՎԶԵԲ-ը հրապարակայնացնում տեղեկությունները և խորհրդակցում շահագրգիռ կողմերի հետ, որպեսզի 2020թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտնելուց հետո նպաստի ՏՀՔ-ի ռազմավարությունների, քաղաքականությունների և գործառնությունների մասին ավելի լավ իրազեկմանն ու ընկալմանը: Խնդրում ենք այցելել Տեղեկությունների հասանելիության քաղաքականության կայքէջը՝ պարզելու, թե ինչ տեղեկություն կա ՎԶԵԲ-ի կայքում:

Տեղեկություններ ստանալու համար կարող եք կոնկրետ հարցումներ ներկայացնել՝ օգտագործելով ՎԶԵԲ-ի հարցումների ձևաթուղթը:

## Ծրագրերի հաշվետվողականության անկախ մեխանիզմ (ԾՀԱՄ)

Եթե Հաճախորդի կամ Բանկի հետ բնապահպանական և սոցիալական ասպեկտների կամ հրապարակայնացման հետ կապված խնդիրների լուծմանն ուղղված ջանքերն (օրինակ, Հաճախորդի՝ Ծրագրի մակարդակով բողոքարկման մեխանիզմի կամ Բանկի ղեկավարության հետ անմիջական ներգրավման միջոցով) ապարդյուն են, ապա

անհատներն և կազմակերպությունները կարող են դիմել ՎԶԵԲ-ի՝ Ծրագրերի հաշվետվողականության անկախ մեխանիզմին (ԾՀԱՄ)՝իրենց մտահոգող խնդիրների լուծումը ստանալու համար:

ԾՀԱՄ-ն անկախ եղանակով քննում է Ծրագրի հետ կապված խնդիրները, որոնք, ենթադրաբար, վնաս են պատճառել (կամ, հավանաբար, կարող են վնաս պատճառել): Մեխանիզմի նպատակն է. աջակցել Ծրագրի շահագրգիռ կողմերի միջև երկխոսությանը՝ շրջակա միջավայրի, սոցիալական ասպեկտների և հրապարակայնացման հետ կապված խնդիրները լուծելու նպատակով, պարզել, արդյոք Բանկը համապատասխանել է իր իսկ Բնապահպանական և սոցիալական քաղաքականությանը կամ իր՝ Տեղեկությունների հասանելիության քաղաքականության՝ Ծրագրին վերաբերող կոնկրետ դրույթներին, և, անհրաժեշտության դեպքում, վերացնել այդ քաղաքականություններին վերաբերող ցանկացած անհամապատասխանություն՝ միաժամանակ կանխելով Բանկի անհամապատասխանության դեպքերն ապագայում:

Խնդրում ենք այցելել Ծրագրերի հաշվետվողականության անկախ մեխանիզմի կայքէջը ՝իմանալու ավելին ԾՀԱՄ-ի և նրա լիազորությունների մասին, ինչպես Դիմում ներկայացնել ստուգում անցկացնելու համար, կամ կապ հաստատել ԾՀԱՄ-ի հետ էլ-փոստով ipam@ebrd.com ՝ԾՀԱՄ-ի և դիմում ներկայացնելու վերաբերյալ ուղղորդում և լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար: